ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Ս. Շահումյան 4,
Garnihamaynq@mail.ru, հեռ. +37441125156

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

30/04/2024թ. **գ.Գառնի**

2024 թվականի ապրիլի 30-ին՝ ժամը 12:^{00}-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի, Գողթ գյուղի վարչական շենքում տեղի ունեցավ «ՋիԲիէյջ» ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցման վերաբերյալ հանրային քննարկումը:

Մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի ղեկավար Տիգրան Պողոսյանը և խոսքը տրամադրեց ՀՏՋՀ սող. Հարցերի մասնագետ Մարինե Վարդանյանին, ով ներկայացրեց լսումների իրականացման թեման:

Քննարկվեց «ՋիԲիէյջ» ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցման ընթացքում՝ Գառնի համայնքի, Գառնի բնակավայրի Բաղրամյան փողոցի ասֆալտապատման և կոյուղագծի անցկացման աշխատանքների իրականացումը:

Նշվեց, որ Գառնի համայնքի, Գառնի բնակավայրի Բաղրամյան փողոցը արդեն իսկ սուբվենցիոն պետք է իրականացվի ասֆալտապատում:

Որոշվեց սույն ծրագրին անդրադառնալ մոտ 10 օր հետո, երբ կհստակեցվի արդյոք «ՋիԲիէյջ» ՍՊԸ-ի հյուրանոցա-ռեստորանային համալիրը սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցման արդյունքում ասֆալտապատվելու է Գառնի համայնքի, Գառնի բնակավայրի Բաղրամյան փողոցը:

Այնուհետև տեղի ունեցավ մտքերի փոխանակություն Գառնի համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյանի և լսումների ներկաների միջև, լսումներին մասնակցում էին նաև Գառնի համայնքի բնակիչները:

Բաց լսումները ավարտվեցին ժամը 13.[15]-ին :

Լսելով վերոգրյալը, հանրային լսման մասնակիցները առարկություններ հայտնեցին Գառնի համայնքի, Գառնի բնակավայրի Բաղրամյան փողոցի ասֆալտապատման աշխատանքների իրականացման, որը հնարավոր է խոչնդոտ հանդիսանար հետագայում նշված փողոցում կոյուղագծի անցկացմանը: Ուստի, որոշվեց սույն խնդրին անդրադառնալ ավելի ուշ, երբ կհստակեցվի ՀՏՋՀ-ի կողմից հստակ իրականացվող աշխատանքները:

Լսումների կազմակերպիչ՝ **Լ. Թադևոսյան**

Համայքնի ղեկավար՝ **Տ. Պողոսյան**

Համայքնի ղեկավարի տեղակալ՝ **Վ. Կարապետյան**

Արձանագրող՝ **Հ.Գրիգորյան**